



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՄԱՐՏԻ 2024թվականի N 0390-Ա

«ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒԿԱՇԻՆ ԳՅՈՒՂԻ  
ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի 2024Թ. ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ  
ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետի 14.03.2024թ. թիվ 1679 զեկուցագիրը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ծախսերի «Հատուկ նպատակային այլ նյութեր» 4269 հոդվածից պակասեցնել 50.0 հազար դրամ և ավելացնել «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» 4239 հոդվածին՝ թափուր հաստիքների համար հայտարարվող մրցույթների հրապարակայնությունը ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում /www.azdarar.am/ ապահովելու համար:
2. «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ծախսերի նախահաշվում կատարել համապատասխան փոփոխություններ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Վ. ՄԱՐԳՍՅԱՆ

2024 թ. մարտի 18  
ք. Արմավիր





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մարտի 2024 թվականի N 0391-Ա

### ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Արմավիր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 137-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Արմավիր համայնքի ղեկավարի 2022 թվականի օգոստոսի 1-ի թիվ 206 կարգադրությամբ ստեղծված Արմավիր համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու նպատակով ստեղծված մշտական հանձնաժողովի 2024 թվականի մարտի 18-ի թիվ 1765 և մարտի 18-ի թիվ 1766 եզրակացությունները, ընդառաջելով Արմավիր համայնքի Այգեվան գյուղի 5 փողոցի 13 շենքի 1 բնակարանի բնակչուհի Մարինե Մերուժանի Սարգսյանի, Այգեվան գյուղի 4 փողոցի 23 տան բնակչուհի Ժաննա Ավետիսի Աբրահամյանի, Այգեվան գյուղի 2 փողոցի 20 տան բնակչուհի Անահիտ Կիրովի Խաչատրյանի, Արաքս գյուղի Մ Խաչունցի փողոցի 27 տան բնակչուհի Նաիրա Համբարձումի Նիկողոսյանի, Սարդարապատ գյուղի 35 փողոցի 2 տան բնակչուհի Քնարիկ Գվիղոնի Սարգսյանի, Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Գորկու փողոցի 5 նրբանցքի 6 տան բնակչուհի Սիրվարդ Հովհաննեսի Հովհաննիսյանի, Արմավիր քաղաքի Շևչենկո փողոցի 4/1 տան բնակչուհի Սիրանուշ Յուլակի Խանդիլյանի, Արմավիր քաղաքի Գորկու փողոցի 66 տան բնակիչ Սամվել Ռազմիկի Սահակյանի, Արմավիր քաղաքի Մաշտոցի փողոցի 3Ա շենքի 22 բնակարանի բնակչուհի Հայարիկ Համազասպի Իսկանդարյանի, Արմավիր քաղաքի Լեւոնտով փողոցի 10 տան բնակիչ Անուշավան Սամվելի Առաքելյանի օգնության դիմումները.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Արմավիր համայնքի բյուջեի 10 բաժնի 07 խմբի 01 դասի «Սոցիալական հատուկ արտոնություններ» ծրագրի ծախսերի 4729 հոդվածից 20.0 հազարական դրամ

օգնություն հատկացնել՝ Մարինե Մերուժանի Սարգսյանին, Սիրվարդ Հովհաննեսի Հովհաննիսյանին, Սիրանուշ Յուլակի Խանդիյանին, Սամվել Ռազմիկի Սահակյանին, 30.0 հազարական դրամ՝ Ժաննա Ավետիսի Աբրահամյանին, Անահիտ Կիրովի Խաչատրյանին, Նաիրա Համբարձումի Նիկողոսյանին, Հայարիկ Համազասպի Իսկանդարյանին, 50.0 հազարական դրամ՝ Քնարիկ Գվիդոնի Սարգսյանին և Անուշավան Սամվելի Առաքելյանին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Վ. ԲԱՐԳՍՅԱՆ

2024թ մարտի 19  
ք. Արմավիր





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 մարտի 2024 թվականի N 0392-Ա

### ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Արմավիր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 137-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Արմավիր համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 14-ի թիվ 32 կարգադրությամբ ստեղծված Արմավիր համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու նպատակով ստեղծված մշտական հանձնաժողովի 2024 թվականի մարտի 20-ի թիվ 1810 եզրակացությունը, ընդառաջելով Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Բաղրամյան փողոցի 7 շենքի 34 բնակարանի բնակչուհի Սոնյա Գուրգենի Հովհաննիսյանի օգնության դիմումը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Արմավիր համայնքի բյուջեի 10 բաժնի 07 խմբի 01 դասի «Սոցիալական հատուկ արտոնություններ» ծրագրի ծախսերի 4729 հոդվածից 100.0 հազար դրամ օգնություն հատկացնել՝ Սոնյա Գուրգենի Հովհաննիսյանին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ



2024թ մարտի 20  
ք. Արմավիր





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՄԱՐՏԻ 2024թվականի N 0393-Ա

«ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ԳՅՈՒՂԻ  
ՄԱՆԿԱՊԱՐՏԵՐ» ՀՈԱԿ-Ի 2024Թ. ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ  
ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի  
Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղի մանկապարտեզ»  
ՀՈԱԿ-ի ծախսերի «Հատուկ նպատակային այլ նյութեր» 4269 հոդվածից պակասեցնել  
72,7 հազար դրամ և ավելացնել «Կոմունալ ծառայություններ» 4213 հոդվածին՝  
դեռատիվացնելով ծառայություն ձեռք բերելու համար:
2. «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղի մանկապարտեզ»  
ՀՈԱԿ-ի ծախսերի նախահաշվում կատարել համապատասխան փոփոխություններ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2024 թ. մարտի 20  
ք. Արմավիր





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՄԱՐՏԻ 2024թվականի N 0394-Ա

«ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒԿԱՇԻՆ ԳՅՈՒՂԻ  
ՄԱՆԿԱՊԱՐՏԵՐ» ՀՈԱԿ-Ի 2024Թ. ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ  
ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի  
Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղի մանկապարտեզ»  
ՀՈԱԿ-ի ծախսերի «Կենցաղային և հանրային սննդի նյութեր» 4267 հոդվածի  
սննդամթերքի գնման գործընթացի արդյունքում խնայված գումարներից պակասեցնել  
54,6 հազար դրամ և ավելացնել «Կոմունալ ծառայություններ» 4213 հոդվածին՝  
դեռատիզացիոն ծառայություն ձեռք բերելու համար:
2. «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղի մանկապարտեզ»  
ՀՈԱԿ-ի ծախսերի նախահաշվում կատարել համապատասխան փոփոխություններ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ



2024 թ. մարտի 20  
ք. Արմավիր





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՄԱՐՏԻ 2024թվականի N 0395-Ա

### ՎԱՀԵ ՀՐԱՆՏԻ ՔԱՆԴՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը, անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր 2024 թվականի մարտի 12-ին, Վահե Հրանտի Քանդոյանի 14.03.2024թ թիվ 1675 դիմումը

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Վահե Հրանտի Քանդոյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարգարապատ գյուղում գտնվող /սեփականության իրավունքի գրանցման վկայական 0235913/ գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գյուղ Սարգարապատ, 38-րդ փողոց 9:
- Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
- Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ.ՍԱՐԳՍՅԱՆ

2024 թ. մարտ 18  
ք. Արմավիր





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՄԱՐՏԻ 2024թվականի N 0396-Ա

### ՄԱՀԱՐ ԶՈՐԲԱՅԻ ԶԱՎՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր 2024 թվականի փետրվարի 11-ին, Մահար Զորբայի Զավոյանի 28.02.2024թ թիվ 1370 դիմումը

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Մահար Զորբայի Զավոյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղում գտնվող 04-059-0092-0017 կադաստրային ծածկագրով գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գյուղ Սարդարապատ, 40-րդ փողոց 20:
- Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
- Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2024 թ. մարտ 20  
ք. Արմավիր

Վ.ՍԱՐԳՍՅԱՆ







## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՄԱՐՏԻ 2024թվականի N 0397-Ա

### ԷԴՈՒԱՐԴ ԳՐԻԳՈՐԻ ԱՆԻՍՈՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ.դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը, Էդուարդ Գրիգորի Անիսոնյանի 19.01.2024թ թիվ 0347 դիմումը

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Էդուարդ Գրիգորի Անիսոնյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղում 04-043-0839-0007կադաստրային ծածկագրում գտնվող գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գյուղ Մայիսյան, Այգեգործական 4-րդ թաղամաս 7-րդ փողոց 5/1:
- Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրհամայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
- Ուժը կորցրած ճանաչել 2024 թվականի փետրվարի 2-իթիվ 0188-Ա որոշումը:
- Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2024 թ. մարտ 20  
ք. Արմավիր



Վ.ՍԱՐԳՍՅԱՆ





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՄԱՐՏԻ 2024թվականի N 0398-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ Մ.ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑ 78 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-  
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՎՐԵԺ ԿԱԼԱՆԹԱՐԻ ՀԱԿՈՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ  
ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 51-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8, 11-րդ կետերով և 13-րդ կետի <<ա>> և <<բ>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N600-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին, 2-րդ 4-րդ կետով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք Մ.Գորկու փողոց 78 հասցեում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշում, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի 2022թ.ապրիլի 9-ին և Վրեժ Կալանթարի Հակոբյանի 15.11.2023 թվականի թիվ 6334 դիմումը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք Մ.Գորկու փողոց 78 հասցեում գտնվող Վրեժ Կալանթարի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող 450.0 քմ հողամասին կից ավել օգտագործվող 90.0 քմ մակերեսով հողամասը անհատույց հատկացնել նրանց սեփականության իրավունքով, իսկ 301.0 քմ մակերեսով հողամասն օտարել ուղիղ վաճառքի միջոցով, հողամասի կադաստրային արժեքի



30 %-ի չափով՝ 1 քմ հողամասի համար՝ 1877.7 ՀՀ դրամ, ընդհանուր 169556/մեկ հարյուր վաթսուիններ հազար հինգ հարյուր հիսունվեց/ ՀՀ դրամ:

2. Վերականգնել Վրեժ Կալանթարի Հակոբյանի ժառանգության իրավունքով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք Մ. Գորկու փողոց 78 հասցեում գտնվող 0.0841 հա / օրինական հողամասի վրա 1962թ., կառուցված 143.0 քմ մակերեսով քնակելի տան, 1993թ. կառուցված 5.5 քմ մակերեսով կաթսայատան և 1993թ. կառուցված 2.3 քմ մակերեսով պարսպի նկատմամբ, իսկ խորդանոցը, հավաքունը, սանհանգույցը և զուգարանը համարել ինքնակամ:

3. Ընդունել ի գիտություն, որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2024 թ. մարտ 20  
ք. Արմավիր



Վ. ՍԱՐԳՍՅԱՆ





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՄԱՐՏԻ 2024թվականի N 0399-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՄԱՎԻՐ  
ՔԱՂԱՔԻ ՄՈՒՐԱՑԱՆ ԹԱՂԱՄԱՍ 18 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-  
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԵՔՍԱՆ ԶՈՆԻԿԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ  
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 11-րդ կետերով և 13-րդ կետի <<ա>> և <<բ>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N600-Ն որոշման 2-րդ հավելվածի 6-րդ կետով, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման N-1 հավելվածի 49-րդ կետով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Մուրացան թաղամաս 18 հասցեում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ. հունվարի 17-ի թիվ 01 արտահերթ նիստ 006-Ա որոշում և ինքնական կառույցն իրականացրած անձի՝ Ալեքսան Ալեքսանյանի 22.09.2022 թվականի թիվ 5115 դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Քաղաքացի Ալեքսան Զոնիկի Ալեքսանյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի



Մուրացան թաղամաս 18 հասցեում գտնվող 964.0 քմ մակերեսով հողամասի գործառական նշանակությունը հասարակական կառուցապատումից փոփոխել բնակավայրերի բնակելի կառուցապատման:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Մուրացան թաղամաս 18 հասցեում գտնվող Ալեքսան Զոնիկի Ալեքսանյանի սեփականության իրավունքով պատկանող 600.0 քմ տնամերձ հողամասին կից ավել օգտագործվող 120.0 քմ մակերեսով հողամասը անհատույց հատկացնել նրան սեփականության իրավունքով, իսկ 244.0 քմ մակերեսով հողամասն օտարել ուղիղ վաճառքի միջոցով, հողամասի կադաստրային արժեքի 30%-ի չափով՝ 1 քմ հողամասի համար՝ 366.3 ՀՀ դրամ, ընդհանուր 89377/ ութսունինը հազար երեք հարյուր յոթանասունյոթ / ՀՀ դրամ:

3. Վերականգնել Ալեքսան Զոնիկի Ալեքսանյանին /ծնված 04.12.1961թ./ սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Մուրացան թաղամաս 18 հասցեում գտնվող գույքային միավորների՝ 964.0 քմ օրինական հողամասի վրա 1996 թ. կառուցված 388.1 քմ բնակելի տան և պարսպի նկատմամբ:

4. Ալեքսան Զոնիկի Ալեքսանյանին պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Մուրացան թաղամաս 18 հասցեում գտնվող 964.0 քմ մակերեսով բնակելի կառուցապատման գործառական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված ծածկը՝ 37.6 քմ մակերեսով ճանաչել օրինական:

5. Ընդունել ի գիտություն, որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

6. Սահմանել, որ իքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18- ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված՝ 37.6 քմ արտաքին մակերեսով ինքնակամ ծածկի օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ 1209.0 ՀՀ դրամ ընդհանուր 45459 (քառասունհինգ հազար չորս հարյուր հիսունինը) ՀՀ դրամ:

7. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Մուրացան թաղամաս 18 հասցեում գտնվող գույքի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2022WQLWHA

8. Ալեքսան Զոնիկի Ալեքսանյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք Մուրացան թաղամաս 18 հասցեում գտնվող գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Արմավիր քաղաք Մուրացան թաղամաս 18/1:

9. Ուժի կորցրած ճանաչել 2024 թվականի փետրվարի 5-ի թիվ 0207-Ն որոշումը:





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՄԱՐՏԻ 2024թվականի N 0400-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> 600-Ն որոշման 1-ին հավելվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2023թ դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ա որոշումը, հաշվի առնելով 21.12.2023թ կնքվել է առքուվաճառքի պայմանագիրը, որի հիման վրա Ռոմեն Հովհաննիսյանը ձեռք է բերել Արմավիր համայնքի Արավիր քաղաքի Նալբանդյան փողոցի 89/1 հասցեում գտնվող գույքը, որի ժամանակ եղել են ինքնակամ շինություններ, որոնք հաշվառված են եղել նախկին սեփականատեր՝ Սարգիս Հայրապետյանի կողմից, և հիմք ընդունելով Ռոմեն Հովհաննիսյանի 30.01.2024 թ. թիվ 0610 դիմումը

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ռոմեն Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի քաղաք Արմավիր Նալբանդյան փողոց 89/1 հասցեում գտնվող 506.0քմ օրինական հողամասի վրա կառուցված 184.2քմ արտաքին և 144.9 քմ ներքին մակերեսով բնակելի տունը, 98.15քմ արտաքին և 83.5 քմ մակերեսով օժանդակ շինությունները և 6.05 քմ մակերեսով պարիսպը համարել օրինական:

2. Ընդունել ի գիտություն, որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.



2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Սահմանել, որ իքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված՝ ընդհանուր արտաքին 282.35 քմ մակերեսով ինքնակամ շինությունների օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ 1969 ՀՀ դրամ՝ ընդհանուր 555947 (տասներեք հազար հինգ հարյուր վաթսուհինգ) ՀՀ դրամ:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի քաղաք Արմավիր Նալբանդյան փողոց 89/1 հասցեում գտնվող գույքի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023QEBK8H:

5. Ուժը կորցրած ճանաչել 2024թ փետրվարի 21-ի թիվ 0290-Ա որոշումը:

6. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

2024 թ. հուլիսի 21  
ք. Արմավիր



**Վ.ՍԱՐԳՍՅԱՆ**





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՄԱՐՏԻ 2024թվականի N 0401-Ա

### ՍԻՄՈՆ ԽԱԶԻԿԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԵՐԻՆ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի, 33-րդ, 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը, Սիմոն Խաչիկի Սիմոնյանի 15.03.24թ. թիվ 1683 դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սիմոն Խաչիկի Սիմոնյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք Մ.Լերմոնտով փողոց 105 հասցեում /սեփականության վկայականի թիվ 09092020-04-0120/ գտնվող 1.0903 հա մասին տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Արմավիր քաղաք Մ.Լերմոնտով փողոց 105/4, իսկ 1.1373 հա մասի հասցեն թողնել նույնը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Արմավիր քաղաք Մ.Լերմոնտով փողոց 105:

2. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2024 թ. մարտ 26  
ք. Արմավիր



Վ.ՍԱՐԳՍՅԱՆ





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՄԱՐՏԻ 2024թվականի N 0402-Ա

### ԺՈՐԺ ԱՐՏԱՎԱԶԴԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՆԵՐԻՆ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի, 29-րդ և 51-րդ, 33-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը և ժորժ Խաչատրյանի 01.03.2024թ. թիվ 1408 դիմումը՝

#### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Ժորժ Արտավազդի Խաչատրյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Մաշտոց փողոց 1-ին նրբանցք, 6 հասցեում գտնվող 197.0 քմ մակերեսով մասին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, քաղաք Արմավիր Մաշտոց փողոց 1-ին նրբանցք, 6/1, իսկ 390.0 քմ մակերեսով մասի հասցեն թողնել նույնը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, քաղաք Արմավիր Մաշտոց փողոց 1-ին նրբանցք, 6:
- Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
- Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2024թ. Մարտի 26  
ք. Արմավիր

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՄԱՐՏԻ 2024թվականի N 0403-Ա

### ԱԶՆԻՎ ԿՐՈՔՈՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր 2024 թվականի մարտի 13-ին, Ազնիվ Կրոքոյի Գրիգորյանի լիազորված անձ Մանե Արմենի Թամազյանի 18.03.2024թ թիվ 1761 դիմումը

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Ազնիվ Կրոքոյի Գրիգորյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Հացիկ գյուղի 04-058-0036-0003 կադաստրային ծածկագրում գտնվող գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գյուղ Հացիկ, 15-րդ փողոց, 5:
- Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
- Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ.ՍԱՐԳՍՅԱՆ

2024 թ. մարտ 26  
ք. Արմավիր







## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՄԱՐՏԻ 2024թվականի N 0404-Ա

ԱՍԱՏՈՒՐ ՊԵՏՐՈՍԻ ԲԱԴՈՒՐՅԱՆԻՆ, ԱՐՄԻՆԵ ԱՍԱՏՈՒՐԻ ԲԱԴՈՒՐՅԱՆԻՆ, ՄԱՐԻՆԵ  
ԱՍԱՏՈՒՐԻ ԲԱԴՈՒՐՅԱՆԻՆ ԵՎ ԱՆԱՀԻՏ ՄՈՎՍԵՍԻ ԽԱՄԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ  
ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր 2024 թվականի փետրվարի 2-ին, Ասատուր Պետրոսի Բադուրյանի 09.02.2024թ թիվ 0942 դիմումը

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ասատուր Պետրոսի Բադուրյանին, Արմինե Ասատուրի Բադուրյանին, Մարինե Ասատուրի Բադուրյանին ԵՎ Անահիտ Մովսեսի Խամիսյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Հացիկ գյուղի 04-058-0161-0003 կադաստրային ծածկագրում գտնվող գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գյուղ Հացիկ, 7-րդ փողոց, 7:

2. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4. Ուժը կորցրած ճանաչել 2024 թվականի մարտի 11-ի թիվ 0355-Ա որոշումը:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2024 թ. մարտ 20  
ք. Արմավիր







# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՄԱՐՏԻ 2024թվականի N 0405-Ա

### ՍԻԼՎԱ ԶԱՎԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը, Սիլվա Զավենի Հովհաննիսյանի 12.02.2024թ թիվ 0965 դիմումը

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Սիլվա Զավենի Հովհաննիսյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքում գտնվող 04-001-0577-0021 գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Արմավիր քաղաք Անտառոտ այգեգործական թաղամաս 21:
- Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
- Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական գատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ.ՍԱՐԳՍՅԱՆ

2024 թ. մարտ 26  
ք. Արմավիր







# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՄԱՐՏԻ 2024թվականի N 0406-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ  
ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂ ԼԵՆՈՒՂԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑ 18  
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԻ  
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշումը և  
դեկլարվելով հողային օրենսգրքի 75, 118 հոդվածներով՝  
Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ  
2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 49-րդ և 50-րդ կետերով

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքին  
սեփականության իրավունքով պատկանող Լենուղի գյուղի 04-044-0014-0012  
կադաստրային ծածկագրում գտնվող վարչական շենքի զբաղեցրած և սպասարկման  
համար անհրաժեշտ 0.0488 հա մակերեսով հողամաս ամրագրել վարչական  
շենքին:

2.Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լենուղի գյուղի 04-044-0014-0012  
կադաստրային ծածկագրում գտնվող վարչական շենքին տալ ճշտված հասցե՝  
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի, Լենուղի  
գյուղի 3-րդ փողոց 18:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Վ.ՍԱՐԳՍՅԱՆ

2024 թ. մարտ 20  
ք. Արմավիր







# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՄԱՐՏԻ 2024 թվականի N 0407-Ա

### ԿԱՐԱՊԵՏ ՍԱՐԳՍԻ ԳԱՌԻՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 21-ի 10 նիստի թիվ 136-Ն որոշումը, ըստ 14.02.2024թ ժառանգության իրավունքի վկայագրի Կարապետ Սարգսի Գառույանի 30.01.2024 թ. թիվ 1346 դիմումը՝

#### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Կարապետ Սարգսի Գառույանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Լենուդի գյուղում /վկայական թիվ 0235552/ գտնվող գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գյուղ Լենուդի, 1-ին փողոց, 6:
- Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
- Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2024 թ. Մարտ 26  
ք. Արմավիր

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՄԱՐՏԻ 2024թվականի N 0408-Ա

### ՄԵԼԻՔ ՇԱՀԵՆԻ ՊՈԴՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը, Մելիք Շահենի Պոդոսյանի լիազորված անձ Էմմա Առուշանի Սիմոնյանի 13.03.2024թ թիվ 1654 դիմումը

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Մելիք Շահենի Պոդոսյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղի 04-043-0304-0020 կադաստրային ծածկագրում գտնվող գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գյուղ Մայիսյան, Հարավային թաղամասի 3-րդ փողոց 25:
- Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
- Ուժը կորցրած ճանաչել 2024 թվականի մարտի 18-ի թիվ 0379-Ա որոշումը:
- Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2024 թ. մարտ 26  
ք. Արմավիր

Կ.ՍԱՐԳՍՅԱՆ





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՄԱՐՏԻ 2024թվականի N 0409-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 31 /ԵՐԵՍՈՒՆՄԵԿ/ ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԵՐԻ  
ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂԱՄԱՍ ՎԵՐԱՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 35 հոդվածի առաջին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, 29 հոդվածով, 75 հոդվածի առաջին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով, որ համայնքի տարածքում խորքային հորերը հորատվել են մինչև 1990թ. և նրանց սպասարկման համար հատկացված տարածքների արխիվային նյութերը պահպանված չեն եղել, այդ հողամասերը ցանկապատված են եղել, հանդիսանում են համայնքային սեփականություն, դրանց պահպանումը և շահագործումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, հատկացված չեն եղել քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և ելնելով անհրաժեշտությունից

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Համայնքային վարչական տարածքում գտնվող և Հայաստանի Հանրապետության ներդրումային ծրագրերի շրջանակում ոռոգման նպատակով վերականգնվող 31/երեսունմեկ/ խորքային հորերի վերականգման, շահագործման և սպասարկման համար, որպես համայնքային սեփականություն վերահատկացնել յուրաքանչյուրին 20քմ հողատարածք

### ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔ

1. Խորքային հոր/Գորկի փողոց/04-001-0244-032
2. Խորքային հոր/8-րդ դպրոցին հարակից/04-001-0206-007-ի մեջ
3. Խորքային հոր/գերեզմանատան հարակից /04-001-923-001-ի մեջ
4. Խորքային հոր/Գայ-Մանուշյան փողոց/04-001-0417-027/
5. Խորքային հոր/գազի բաշխիչ կայանին հարակից /04-001-0136-001-ի մեջ



6. Խորքային հոր/Սայաթ-Նովա-Հ.Ավետիսյան փողոց/04-001-036-023
7. Խորքային հոր/Հանրապետության 1-ին նրբ. /04-001-0950-0001-ի մեջ
8. Խորքային հոր/Սայաթ-Նովա փողոց 2-րդ նրբ. /04-001-0424-0010-ի մեջ
9. Խորքային հոր/3-րդ դպրոցին հարակից /04-001-0213-004-ի մեջ
10. Խորքային հոր/1 մշակութային տանը հարակից /04-001-0261-006-ի մեջ
11. Խորքային հոր/ 110 թաղամաս /04-001-078-006/
12. Խորքային հոր/Այգու /04-001-071-001-ի մեջ
13. Խորքային հոր/Ջերմոցների /04-001-0503-002-ի մեջ

#### **ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂ**

14. Խորքային հոր խմելու ջրի-կայմային /կենտրոնական / 04-044-002-003
15. Խորքային հոր խմելու ջրի ԿՏԵ /ԶԱՎՈԴ /04-044-016-0010-ի մեջ

#### **ԱՐԱՔՍ ԳՅՈՒՂ**

16. Խորքային հոր խմելու ջրի Դքի տակ 04-016-024-061
17. Խորքային հոր խմելու ջրի Նովոյի նոր 04-016-022-039-ի մեջ
18. Խորքային հոր խմելու ջրի Ռոմուշ 04-016-022-058

#### **ՄԱՅԻՍՅԱՆ ԳՅՈՒՂ**

19. Ամերիկյան նվեր 04-043-0455-000
20. Այգեգործական N1 04-043-0869-0017
21. Այգեգործական N2 04-043-0845-001
22. Այգեգործական N3 04-043-0864-001
23. Այգեգործական N4 04-043-0844-001

#### **ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ԳՅՈՒՂ**

24. Խորքային հոր դպրոցի մոտ 04-066-0049-ից

#### **ՍԱՐԴԱՐԱՊԿՍ ԳՅՈՒՂ**

25. Խորքային հոր խմելու ջրի դաշտի մեջ 04-059-0276-0005
26. Խորքային հոր խմելու ջրի էլ.աղացի մոտ 04-059-0116-0003



## ԱՅԳԵՎԱՆ ԳՅՈՒՂ

27. Խորքային հոր խմելու ջրի 2-րդ փողոց հողամասի վերջնամասում 04-062-0559-001
28. Խորքային հոր խմելու ջրի գյուղի կենտրոնում, ճաշարանի հարևանությամբ 04-062-014-019
29. Խորքային հոր խմելու ջրի 8-րդ փողոցի վերջնամասում 04-062-026-001

## ՀԱՅԻԿ ԳՅՈՒՂ

30. Խորքային հոր խմելու ջրի սառնարանի մոտ 04-058-041-012
31. Խորքային հոր խմելու ջրի Թաթուսի 04-058-0017-0036

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2024 թ. մարտ 27  
ք. Արմավիր







# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՄԱՐՏԻ 2024թվականի N 0410-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N 600-Ն որոշման 2-րդ հավելվածի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ, 49-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ հունվարի 17-ի թիվ 01 արտահերթ նիստ 006-Ա որոշում հիմք ընդունելով Արմեն Հարությունի Կյուպեյանի 23.10.2023թ. թիվ 5860 դիմումը և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր Արմավիր համայնքի Մայիսյան գյուղի 04-043-0850-0022 կադաստրային ծածկագրով հողամասում գտնվող կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Արմեն Հարությունի Կյուպեյանին /ծնված 10.09.1964թ./ սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղ Այգեգործական 4-րդ թաղամասի 2-րդ փողոց 1-ին նրբանցք 15 հասցեում գտնվող գույքային միավորների՝ 1098.0 քմ օրինական հողամասի վրա 1991թ. կառուցված 111.14 քմ արտաքին և 95.5 քմ ներքին մակերեսով բնակելի



տունը, 1991թ. կառուցված 14.3 քմ արտաքին և 11.7 քմ ներքին մակերեսով շոգեբաղնիքը, 1991թ. կառուցված 29.0 արտաքին և 24.7 քմ ներքին մակերեսով ավտոտնակը, 1993թ. կառուցված 43.2 քմ արտաքին և 38.0 քմ ներքին մակերեսով անասնաշենքը, 1995թ. կառուցված 12.4 քմ արտաքին և 9.7 քմ ներքին մակերեսով լողավազանը և 1993թ. կառուցված 3.36 քմ արտաքին և 2.0քմ ներքին մակերեսով հավաքունը ճանաչել օրինական:

2. ՀՀ Կառավարության 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն ինքնական կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:

3. Ընդունել ի գիտություն, որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2024 թ. մարտ 27  
ք. Արմավիր



Կ. ՍԱՐԳՍՅԱՆ





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՄԱՐՏԻ 2024 թվականի N 0411-Ա

### ՀԵՐՄԻՆԵ ՍԵՐՈՔԻ ՏՈՆՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր 2024 թվականի մարտի 6-ին, Հերմինե Սերոքի Տոնոյանի 14.03.2024թ թիվ 1667 դիմումը

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Հերմինե Սերոքի Տոնոյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղի 04-043-0025-0006 կադաստրային ծածկագրում գտնվող գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գյուղ Մայիսյան, Ս. Սարգսյան փողոց,1:
- Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
- Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2024 թ. Մարտ 27  
ք. Արմավիր



ՎԱՐՇԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՄԱՐՏԻ 2024թվականի N 0412-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔ Խ.ԱՐՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ 118 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ  
ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱԿՈՐԻ ԱՆԹԱՆԵՍՅԱՆԻ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական քնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8, 11-րդ կետերով և 13-րդ կետի <<ա>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 28-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 49-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը, Հայրապետ Հակոբի Աթանեսյանի 22.01.2024թ. թիվ 0367 դիմումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք Խ.Արովյան փողոց 10 հասցեում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունքներ և գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վերականգնել Հայրապետ Հակոբի Աթանեսյանի /ծնված 01.09.1954թ./ սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք Խ.Արովյան փողոց 118 հասցեում գտնվող



